

ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻԻ ԳԱՆԻ ՄԸ ԿՈՆԳՐԱԿՆԵՐԸ



Ներսիս ծառայ Քրիստոսի և անհատանելի կառօճ Աստուծոյ եպիսկոպոսական եւ Կորուզիկոս Ամենակն Հայոց Մայրաքոյն Պատրիարք հաւանագրական նախանձար արքայոց արարեսեան մայր եկեղեցւոյ արքայ կարողիկի էջնիսածնի:

Հարազատից սրբոյ Առաքելական եկեղեցւոյ Հայոց և սրբոց Լուսաւորչացն նորին սրբազան առաքելոցն Քաղզէսոսի եւ Բարդուղիմէոսի և առաքելաստրաս նախահայրապետի մերոյ սրբոյն Գրիգորի մեծի պարթեկի մեծապատիւ Յովսէփի և Ջաբրայի և Մարգար խանից նաեւ պատուարժան մահտեսի Սիմօն, Գէորգ Եղիսիպոսեան, Աւետիս մահտեսի Անանեան, Յարութիւն Պապալանեան և մահտեսի ինչասուրբ մահտեսի Պետրոսեան արքայ ազայից նուիրեմք զաղջոյն Յիսուսաւորդ հանդիքէ Աստուածային բազմապատիկ օրհնութեամբք, եւ ծանուցանեմք զի որպէս և յայտնեցեալ է ձեզ ամենեցուն յետ վախճանի նախորդ վիճակաւորին վանից Սրբազան Առաքելոյն Քաղզէսոսի յատկացեալ վիճակի անցքն յազապս առ ի նմանէ Ֆիացեալ զոյրից զբամախանաց և նրիթեղիկաց նմանօրինակ մեզ ևս յայտնեալ է նորուն վիճակի վիճակաւոր սրբազան Սահակ եպիսկոպոսն Սաղունեան մի զկնի միայ զբուրթեամբ իւրով իբրև թէ պաշտօնեայ հանդուցեալ Նիկիոզայոս եպիսկոպոսի Յովսէփն Քաղզուցեալ է զամենայն զգուժար զբամոց նորայ և եղեալ նրիթեղիկաց յորում ժամանակի մեք գորով ի Քոֆլիկ քաղաքի այն ինչ սպասեաք լիազոյն հաւաստի տեղեկութեանց համբաւոցն տարածեցեալ և առ մեզ ևս հասելոց բերանացի պատմութեամբ եկողացն Դաւրիժոյ և զբուրթեամբք սրբազան Սահակ եպիսկոպոսի առ մեզ որպէս գրէ և ինքն Սրբազան Սահակ եպիսկոպոսն յիշեալ Յովսէփ Քաղզէսոսեան պաշտօնեայ հանգուցեալ Նիկիոզայոս եպիսկոպոսի փայտասեաց եկեալ հասեալ ի սուրբ էջմիածին մատուցեալ էր զբողոքազեր ի Սինօզն սրբոյ էջմիածնի առաւել յոյժ զգալի պատմաբանութեամբ:

Վասն սաստկագին տանջանաց իւրոց ի խստագոյն վրէժինդրութեանց Սրբազան Սահակ եպիսկոպոսի որպէս հաւաստի ապացոյց իւրումն տանջանաց ցուցանելով զթափեալ եղնզունսն մատանց ոտիցն իւրոց. ոյր աղագաւ Սրբազան Սինօզն էջմիածնի զբուրթեամբ իւրով առ մեզ ի Քիֆլիկ քաղաք տուեալ զտեղեկութիւն վասն ծանրալուր բողոքագրութեան Այնմ խորհրդածութեան Սինօզի էջմիածնի թէպէտ համաձայնեցաք և մեք զի առաքեցէ Սինօզն զմի կամ երկու արժանաւոր անձինս յաղագս հասու լինելոյ իսկութեանց զբրեցելոցն ի յիշեալ Սրբազան Ապիսկոպոսն և զբրեցելոցն ի բողոքաւոր Յովսէփայ Քաղզէսոսեան սակայն նոյն ինքն Սինօզն յետ ընկալելոյ զմեր համաձայնութիւն ալով իւրով արժանաւոր խորհրդածութեամբ արժան էր գատեալ սպասել մերում վերադարձին ի Քիֆլիկոյ. ըստ որոյ ի ժամանելն մեր ի սուրբ էջմիածնի յայտնեալ մեզ վասն իւրումն լուսազոյն ևս խորհրդածութեանց, հուսակն անօրինակ ցաւելի անցից ի միջի հոգեւորականաց և մարմնաւորականաց մերազանց մեք ևս առաւել բարեզոյն համարելով զերկորդ խորհրդածութիւն Սինօզի էջմիածնի լուս համարեցաք զոչ առաքելն աստուածական վերաքննութեանց զհոգեւորականս կամ զայլ աստիճանաւորս որոց հուսակն զօրէ ծանրացուցանել զվճուադատութիւն առաւել քան որքան մարթէ է զմտաւ ամել:

Եւ ըստ սրում միաձայն աղագակ Յովսէփայ Քաղզէսոսեան առաջին այն է թէ առանց իրաւացի վերաքննութեանց չարչար տանջեցին զինքն սաստկագին խստաւ:

սրտութեամբ և ի գրութիւնսն սրբազան Սահակ եպիսկոպոսի և աշուց ոմանց գտանի նշանակեալ զվկայութիւն ոմանց իբրև թէ հանգուցեալ Նիկողայոս եպիսկոպոսի ի մըտանենի իւր ի վիճակաւորութիւն այդմ վիճակի վանից սրբազան առաքելոյն Թաղզէոսի ունեցեալ է իբրև թէ ոչ աւելի քան չորս հազար և ոչ պակաս քան երեք հազար թուման անձնական դրամ որում աւելեալ չափով թուումք և աւելի ևս քան զայն իբրև թէ վկայեալ են և ոմանք հաւատարիմ և արժանահաւատ անձինք թէ յելանելն Նիկողայոս եպիսկոպոսի ի Թավրիզոյ հարիւր խստուն թուման արծաթ դրամ փոխարկեալ է յոսկի. սակս թիթեւութեան ճանապարհի և բաց յայմանէ վկայեալ են թէ գիտեն ինքեանք թէ ի նմին իսկ ամի որքան գումար դրամ ունէր նա ստացեալ ի վիճակէ այլ յետ վախճանի նորա ութսուն և հինգ թուման արծաթ դրամ միայն գտաւ ի մէջ գոյից նորա իսկ ոսկի ոչ բնաւ երեւցաւ. ի վերայ այսպիսի վկայութեանց երեք քահանայից և հինգ ժողովրդական անձանց առաքէ առ մեզ զվախութիւնս (= վկայութիւնս) բազմաց ի գիր արձանացուցեալ ի 10 Նոյեմբրի անցեալ 1851 ամի յորում ևս գրեալ լինի նախ վկայութիւն Մուժամբարու Գեղջիբէք քահանայիցն և հինգ ժողովրդականաց թէ յետ մահուան Նիկողայոս եպիսկոպոսի սպասաւոր նորին Յովսէփ Թաղզէոսեան եհան ի յետխթանէ նորա զմի մուշարի դրամոց առանց բանալոյ և տարա ընդ իւր նաև զայլ սեպական կայք առաջնորդին և կողպուտաք: Եւ հետեւեցուցանեն այնմ վկայութեանց նաև վկայութիւն տասն անձանց որոց ամենեցունց այն է վկայութիւն թէ Տ. Թաղզէոսն գոլով կարգեալ վիճով վանիցն և եղբայր նորա Յովսէփն միով բաւելու ասացեալ տիրեալ էին նոքա բոլոր կառավարութեան վանիցն և Նիկողայոս եպիսկոպոսն կայր ի ձեռս նոցա իբրև գերի: Եւ նոքա երկու եղբարք ունելով ի ձեռս իւրեանց զամենայն զկառավարութիւն վանքական զորս կամէին պահելն ի միաբանութեան վանիցն և զորս ոչ կամէին հալածելն: Եւ թէ աղքատ էին նոքա և զրկանք վանիցն հարստացեալ կան այժմ: Եւ ինչոք Ղաւմբարեան ձիաբանն Նիկողայոս եպիսկոպոսի վկայէ թէ ի ժամանակի վախճանման Նիկողայոս եպիսկոպոսի ևս անդ էի, և զայս միայն գիտեմ զի Յովսէփն զմի մուշարի և զկողպուտան զոր ի Տ. Յաւկորէն էառ զհանգուցեալն, մի ջուլսոյ ջրավալ լիքն տարա յիւր տունն և վարդապետին տուած կողպուտաներն մի հատ Ղարաբաղու չուխա մի հատ ապայ, մի արխալուղ մի կապայ, ինձ ետուն, և մի արխալուղ և մի կապայ Մնէլին ետուն, այսքան միայն գիտեմ: Եւ Մեղքոյ Պետրոսեան վկայէ թէ երկու տարի վանքին հացթուխ էի Թաղզէոս վարդապետն վանքի վեջիլ էր և Տ. Թաղզէոսն կամէր գնալ առաջնորդի մօտը այլ ի ճանապարհին լուեալ վասն մահու նորա դարձաւ ի վանքս զկնիքանի աւուրց եկն և Յովսէփ եղբայրն նորա ընդ Տ. Յարութիւնի ապրանքն վանքի զաֆթար արարին վարդապետին հետ զընացին ի Խոյ. և անտի վարդապետն վարդարձեալ յետ քանի աւուրց վախճանեցաւ յետ նորա վանքական կառավարութիւն անկաւ ի ձեռն Տէր Թաղզէոսի և առաջնորդարանի բանալին էառ նա. ևս մի օր ասաց ինձ թէ այս ջրվալներն տար տուր մշակներին, և թէ ջրվալացն ինչ էր եղեալ դատարկեալ էին. իսկ ինձ ցոյց ետ Տէր Թաղզէոսն զքանի կտոր գիրս մի հատ երուսաղէմայ շապիւք, մօրք և մի հատ արխալին: Տարաւ յեկեղեցին դատարկեաց և ջրվալաց մի հատն ետ Ղազարին և միւսն Վարդանին այսքան միայն գիտեմ: Մընէ Սարգսեանն տայ գրաւոր յայտարարութիւն թէ գոլով ինքն ձիապան Նիկողայոս եպիսկոպոսի յետ վախճանի նորա ի Մուժամբար ի տան Տ. Յակովբ քահանայի որ ինչ եղև ևս տեսի և վկայեմ. Յովսէփ Թաղզէոսն փոքրաւոր առաջնորդի հանեալ էր ի յետխթանէ զմի հատ մուշարի և զայլ իբր թողեալ էր ի ի տան Տ. Յակովբի երբ թաղեացաք զննջեցեալն գնացաք ի Թաւրէզ և զկնի երկց աւուրց առաքեաց զիս Յովսէփն ի Մուժամբար վասն բերելոյ ի տանէ Տ. Յաւկորայ գերկուս ջրվալս կարած պարանոյ. և ես գնացեալ բերի ի Թաւրէզ և տարայ ի տուն պարոն Աւազայ Վարդանեան Առաջխանեանց:

Իմ աչօք տեսեալն սոքա են զոր նշանակեմ անուն անուն. մի հատ մուշարի թարվովու շէնք սպիտակ և կանաչ աղիւսակաձու. մի հատ սուր սպիտակ կոթով մի

Իմ աչօք տեսեալն սոքա են զոր նշանակեմ անուն անուն. մի հատ մուշարի թարվովու շէնք սպիտակ և կանաչ աղիւսակաձու. մի հատ սուր սպիտակ կոթով մի

հատ թֆանք, մի հատ զայֆի սղօրի մի հատ պղնձեայ ջեթիլ երկու հատ խառայ կապայ, մի մահուդ երեսով քուրք, մի հատ թեւաւոր չուխայ թէվրիզոյ, եւ այլ մանր մունր իրս որ ոչ է ի միտու։ Այն մուճարէն Աւագ խանեան Աւագէ էր առեալ այտոցիկ գրեցելոցն խաչոյ զամբարեանն քաջ առ ղեկն է եւ գլուխ որ է փեսայն Յովսէփայ, որն ասաց խաչունէնիս թէ ես ոչինչ ի յայտ չեմ ածեալ դու եւս ի յանցն մի առ ։

Արտաքոյ այսպիսի անկանոն վկայութեանց գրեալ էին և պաշ վկայութիւն իրքն թէ եղեալ է ի պահարանի վանիցն հարիւր թուման դրամ զոր Տ. Թադդէոս կառուարիչն վանեց յետ վախճանի վիճակաւորին տարեալ տուեալ է Յովսէփ խանին Մովսէսեան ։

Եւ ինքն Սահակ եպիսկոպոս այժմ գրէ մեզ ի 15. դեկտեմբերի անցեալ 1851 տմի համար 246. թէ բազումք են որք վկայն վասն դրամոյ հանգուցեալ Նիկողայոս եպիսկոպոսի թէ թաւրիզեցիք և թէ այլք թէ ունեցեալ է հանգուցեալն զբաւական դրամն և Թադդէոս խանն Առաքելեան առեալ է նմա երեք հարիւր թուման վասն շինութեան զանդակատանն վանից որպէս և Միմոն վարդապետն Տ. Գաւթեան մինչ էի ես յաթոռն պատմեաց. ինձ հաւաստապէս և կարէ սրբազնակատար Օծութիւն ձեր ի նմանէ տեղեկանալ ։

Չայս ամենայն ասեմ թէ կողպտեալին երկօքին եզարքն, թողում ասել զկողպտեան վանիցն և մնալն վանից թափուր յամենայն ընչից որոց ամենից դրուար զորձառնութեանց և վկայութեանցն երգամար արարեալ զգործ մատուցանեմ ընդ սմին մերում գրութեան վասն ընթիւնելոյ և հասու լինելոյ և առնելոյ զտօրէնութիւն ուստի և յանձն առնեմ Սրբազնութեան ձեր զայս ամենայնի ի պէտա խրատուց ձերոց և կարգապարութեանց թիրեւս իր ինչ գոյացի սակս շինութեան և նորոգութեան քայքայեալ վանուց ։

Ըստ յառաջարկելոյ Սահակ եպիսկոպոսի մեք հարցեալ ի Սիմէոս վարդապետէ Տր. Գաւթեան այժմ եպիսկոպոսի վասն տեղեկութեանց նորա ի մասին կայից Նիկողոս եպիսկոպոսի նա պատմեաց մեզ թէ արգարեւ ասացեալ է ինքն սրբազան Սահակ եպիսկոպոսին զի հանգուցեալ Նիկողոս եպիս-

կոպոսն ունենալով զպանջողութիւն ի Սարգիս եպիսկոպոսէ նախավկայի վանից ընկաւեալ է ի նմանէ ի տեղի պարտուցն նորա ինքեան մի արծաթեայ բուռվառ մի ձեռն խաչ արծաթեայ թիիլի. մի խաչ առանց պատուանդանի երկու երեսն կանաչ ըստ ոմանց համարեալ խաչ սոկի և ըստ ոմանց պղինձ ։ նաև Խարայէլ եպիսկոպոս առաջնորդն թողեալ ի վերայ վանիցն պարտք հազար հարիւր թուման և ինքն Սիմէոն եպիսկոպոսն այժմ առաքեցեալ գլուղ նուիրակ սրբոյ էջմիածնի հրամանաւ հանգուցեալ կաթողիկոսին ի մասին վճարաց այնմ պարտուց տուեալ Նիկողայոս եպիսկոպոսին յարդեանց նուիրակութեան երեք հարիւր թուման թէվրիզոյ, նաև յանձնեալ նմա զնուիրակութիւն Սալմաստու զի հաւաքեցտէ ես ինքն ի մասին վճարաց հարիւր հարիւր թուման պարտուցն. այլ թէ որքան ինչէ հաւաքեալ չէ յայտնի ինքեան. միայն վկայէ թէ փոխանակ հազար հարիւր թուման պարտուցն իրաւադատութեամբ զենպիրաց հատուցել են հինգ կամ վեց հարիւր թուման միայն. և զենպետեալ ևս նուիրեալ են վաթսուէ թուման. Եւ վասն հատուցմանց նշանակեալ պարտուցն Նիկողայոս եպիսկոպոսն իրաւունք է համարեալ ի մնացողաց Իսթաէլ եպիսկոպոսի առնուլ վասն իւր զմի վիշապագլուխ արծաթեայ գաւազանն նորա, և զերկու արծաթեայ ճաճանչիւք խաչ հանազերձ պատուանդանաւ ոսկեզօծք, մի արծաթեայ ոսկեզօծ արաւնի հանդերձ պատուանդանաւ, մի լոսանեճ նշանականապարզ որպէս դրեցեալ ի Շահէն պարսից իբրև զնելի ի վերայ վեղարին, մի արծաթեայ միձ տուփ քթախոտի ։

Ունեցեալ է Նիկողայոս եպիսկոպոսն նաև մի շուրջառ զիւլայ մի իմիփորոն երեք կըւտրաւ մի փորուրար զոր թաւրիզու ժողովարդքն են զնեան վասն վանից սուրբ Թադդէոս Առաքելոյ, ընդ որոց և մի փորուրար մի զոյգ պապան, մի վակաս ասղնեգործ, մի շապիկ ժամարարի և մի արծաթեայ զօտի. Այլև բերեալ է ընդ իւր ի սուրբ էջմիածնայ մի թագ մարգարտագար կաթմիր ասէլայեայ, մի իմիփորոն սպիտակ խաչքն զարդարեալ ակամբք ։ Ունեցեալ է հանաքուցեալն նաև երեք մատանի մինն անձնական իւր կապուտ եաղութ և երկուքն յիւրայէլ եպիսկոպոսէ մնացեալք մին խա-

չաձև կարմիր եազութ և մինն բոլորակ նոյնպէս կարմիր եազութիւ ունեւոր ի վե-  
րին կողմն թազաձեւ մանր ակամբ: Մի պա-  
նակէ Իւրախէլ եպիսկոպոսին և մի պանակէ  
ևս իւր անձնականն:

Ասէ Սիմէօն եպիսկոպոսն թէ յիւաննելն  
իմ ի վիճակ պարզեւեաց ինձ Նիկողայոս ե-  
պիսկոպոսն զքանի խոչոր արծաթեայ զարֆ  
զանվայի և ես թողի առ նա զի ի վերա-  
դաւնալս ընկալայց, այլ ոչ յաջողեալ ինձ  
ընկալնուլ զայն մնաց առ յիշեալ եպիսկո-  
պոս և որպէս կարողանամ մտածել թուի  
ինձ լինիլ տասն և չորս այլ այժմ լսեմ թէ  
հինգ հատն միայն գտանի ի միջի կայից  
հանգուցեցելոյն: Ունէր սաէ հանգուցեալն  
նաև մի մեծ տուրբին և մի արծաթեայ կա-  
զամար գօտի դնելոյ: Վկայէ Սիմէօն եպիս-  
կոպոսն նաև վասն անհարստութեանց հան-  
գուցեալ Նիկողայոս եպիսկոպոսի ասելով  
թէ ինքն եղեալ է առ Նիկողայոս եպիսկո-  
պոսն վեց տարի և չէ ստեաւ աչօք իւ-  
րովք և չէ լսեալ ականչօք իւրովք երբէք  
ի բանից բերանայ Նիկողայոս եպիսկոպոսի  
թէ իցէ գտանեցեալ հանգուցելոյն հարս-  
տութիւն մեծ փոքր և թէ ի զալն հան-  
գուցելոյն ի տեսութիւն մեր ասացեցալ է  
ինքն նմա թէ ընդդէր այլքան անպահանջեր  
զալուստ քո ի տեսութիւն կաթողիկոսին և  
պատասխանեալ է թէ չգիտես դու իմ որպէ-  
տութիւնն յորժամ չ'ունեմ զծախայկս որ-  
պէս կարէի զալ և եղև զի այդ քո բան ա-  
սաց ինձ Մակուայ խանն և ես պատասխա-  
նեցի թէ դու գիտես որ ես կարողութիւն  
չունեմ որպէս կարացից գնալ յորժամ նա  
հրամայեաց ինձ թէ ես չուզեմ ի ձէնջ զձեր  
հարկն դու զայն պիտոյացուցեալ վասն քո  
գնա՛ ի տեսութիւն կաթողիկոսին և ես այժմ  
այն կարողացայ զայլ:

Եւ ըստ այսոցիկ հանգամանաց որովհե-  
տև այլք մեր Ժանոթ անձինք գտանին ընդ  
ըամբասանօք պաշտօնատարացն հանգուց-  
եալ Նիկողայոս եպիսկոպոսի Թաղդէոս քա-  
հանային և եղբօր նորա Յովսէփայ Թաղ-  
դէոսական որպէս և ի գրութիւնս ոմանց  
ընթերցեալ լինի թէ Թաղդէոս քահանայն  
և Յովսէփ եղբայրն նորա փնտասկար են  
գտեալ և կողոպտիւ հարստութեանց Նի-  
կողայոս եպիսկոպոսի և սրբոյ վանիցն  
Թաղդէոսի առաքելոյ վասն լուծանելոյ որ-  
քան և կարելի գտանիցի զչար հուչական

վասն հարստութեանց վանիցն կամ Նիկո-  
ղայոս եպիսկոպոսի և չկարծես որասարա-  
կաց յաղաքս զինչութեանց և որքանու-  
թեանց իսկութեամբ եղելոցն և կարծեցեալ  
յափշտակութեանց երկուց եղբարց զհամ-  
բաւեալ հարստութիւնս վանիցն և վիճա-  
կաւորիւ հանգուցելոյ ձեր արժանանձնութիւն  
վասն Աստուծոյ և վասն պաշտպանութեան  
իրաւանցն և արդարութեանց պատեւելով  
զայս մեր կոնդակ լինիլիք միաբանութեամբ  
ունեւոր ընդ ձեզ և զվաղածանօթ հարա-  
զատն մեր աղայ Առաքելն մինասեանց և  
զերեցփոխանն եկեղեցւոյն և զաւագ քա-  
հանայն մանրամասնեալ հետազօտութեամբ  
ըստ ամենայն կարողութեանց ձերու՝ մը-  
տաց և խորհրդոց և արդարատեսութեան  
կամաց պաշտօն Աստուծոյ համարեալիք  
լուսարանել զամենայն էջմարտութիւն վասն  
իսկութեանց եղելոցն ի վանսն յառաջ քան  
զվախճան Նիկողայոս եպիսկոպոսին և վասն  
պակասելոցն յայնցանէ յետ վարձանի նո-  
րա և ի զիր հանեալ իսկութեամբ առաքեա-  
լիք առ մեզ ձեր ամենեցուն ստորագրու-  
թեամբ:

Առաքեմ ձեզ վասն ձեր վերաքննու-  
թեանց նաև զցուցեալ տրեցեալ մեզ ի Յով-  
սէփայ Թաղդէոսեան վասն դումարաց դրա-  
մոց և զանպան նիւթեղինաց յետ վախ-  
ճանի Նիկողայոս եպիսկոպոսի որպէս թէ  
ստացելոց ի Սահակ եպիսկոպոսէ որոց ևօ  
զիսկութեանցն խնեմք ծանուցանել մեզ:

Ընդ այսմ զրեցաք մեք և նորուն բարձր  
ծննդեանն Գեներալ կօնուլին և խնդրե-  
ցաք լինել պաշտպան ձեզ և իրաւանց և  
արդարութեանց դատապարտելոցն ըստ պա-  
հանելոյ հարկի քրիստոսական հրամանաց  
որ տէր և պաշտպան է ամենայն իրաւանց  
և արդարութեանց և ոչ դոյ ակնառութիւն  
առաջի նորա:

Յամի աղական 1301, և փրկական 1852  
չմբ. 380. Նոյեմբեր 29:

ԿԱՔՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
Ն ԵՐՄ Ե Ս

(8)

Հրատ. Կ. Յ. ԲԱՍՄԱՋԱՆ

